1883 ԵՐԵՄՆԱՄԵԱԿ 1912

№ 3 XXX ՄԱՐՏ XXX 1912

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Գաբրիէլ Սունդուկեան. | Պատկեր. |
| Ծառի ճիւղին | Յ. Աղաբաբ. |
| Ծըտի պէս | |
| Զատիկը բերաւ | Գ. Ք. Գ. |
| Կանանց հացկերոյթ Ղարաբաղում. | Պատկերներ. |
| Կարմիր Զատկի համար կաթնահաւնց. | |
| Շնորհաւոր Զատիկ. | |
| Զատկական սեղանի համար. | |
| Սպիտակ ձու. | Յար. Վերդեան. |
| Սուամահ Մարալը | Գր. ք. Գորգեանց. |
| Ռուսական գիւղում | Պատկեր. |
| Քարացած հօտ. | Վ. Այ-Վաչ. |
| Աւարայր (Պատմ. քերթուած). | Յ. Պետրոսեան. |

### Մանկական ֆելիետոն

Կատւի ու շան զատիկը (6 նկարներով) . Յար. Թումանեան.

### Յայտարարութիւններ


# ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

Լոյս տեսաւ այսօր **ՏԱՐԱԶԻ** հրատարակ յաւելուած

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ մեծադիր պատկերով՝ ՄԵԾ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԸ

ԽՈՐԱՄՈՒԶԻԱՅ ԹԱԽՏԻ ՄԷՋ։ Պէյլոն, Կտակը և այլն։

Գինը ճանապարհածախսով ամեն տեղ հասը 25 կ., 10-ը—2ր., 25-ը—4 ր., 50-ը 7 ր., 100-ը—12 ր.։

Վերադիր վճարով պատւէր չէ ընդունւում։

Դիմել՝ Тифлисъ, Бюро Печати, Головинск. пр., 41.


### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Աղբիւրի զատկական ներկայ №-ի հետ ուղարկւում են բոլոր բաժանորդներին անխտիր՝

I

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ մահզոյժ հրատարակ յաւելուած

Տարազի

II

ԳԱՃԱՃ, մանկական պիէս, հեղ. Ալ. Աբէլեանի։ Վերջինս ուղարկւում է Աղբիւր յաւելուածներով 2 ր. բաժանորդագին վճարող դպրոցական աշակերտներին։

XXX ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXX

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեսունեերորդ տարի 1912 № 3 Մ ա ր տ

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան



# Ծառի ճիւղին

Ծառի ճիւղին բուն էր հիւսել
Մայր ծիտիկը շիւղերից,
Իւր բնի մէջ ձու էր ածել՝
Չէր հեռանում ճիւղերից.—

Ձից պրծել, թուխս էր եկել,
Այժմ նստած ձւերին՝
Կարօտ սրտով աչքը տնկել՝
Սպասում էր ճուտերին։

Մեղմ զեփիւռը փչում յանկարծ՝
Օրօրում էր ծառ ու ճիւղ,
Ծիտիկը իւր բնում նստած՝
Ձօճ էր ընկնում աներկիւղ։

Ց. Աղաբար.

# ԾԸՏԻ ՊԷՍ

*(Իմ Ռուբիկիս)*

Սրի՛ բալա՛,
Ծըլըվա՛,
Ծտից թև առ,
Թռուրռա՛...
—Թը՛ռ, թը՛ռ, թը՛ռ...
Ծտից թև՛ առ,
Թռուր՛ռա՛,
Պուճուր ձի՛տ դառ,
Ծըլըվա՛...
—Ծի՛ւ, ձի՛ւ, ձի՛ւ...
Սրի՛, ձի՛տիկ, ձիտ-միտուրիկ,
—Ձի՛կ, ձի՛կ, ձի՛կ...
Ծիտիկի պէս պուճ-մուճուրիկ,
—Ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ...
Սրի՛ անթև թըռպըռտուրիկ,
—Ճի՛ւ, ճի՛ւ, ճի՛ւ...
Ծիտիկի պէս ծըլըլուլիկ,
—Ծի՛ւ, ձի՛ւ, ձի՛ւ...
Սրի՛, թև՛ առ,
Սրի՛, ձի՛տ դառ,
Իբրև թևիկ, թևաւորիկ,
Իբրև ձիտիկ, ձիտ-կրլորիկ,
Թըռի՛, թըռի՛, թռուրռալի՛
Իմ ծնկանը ետ վէր արի...
Այ էսպէս,
Այ էդպէս,
Շալ թևաւոր
Ծըտի պէս: *Ց.Աղաբաբ.*

# ՉԱՏԻԿԸ ԹԵՐԱՅԻ

Շաբաթ էր։ Մի գեղեցիկ գարնանային օր։ Գիւղը վաղուց էր զարթնել։ Նրա մէջ մի արտասովոր կենդանութիւն էր տիրում։ Վաղը Ծաղկազարդ էր, հարկաւոր էր պատրաստութիւնները տեսնել գարնան անդրանիկ տօնին փառահեղ դիմաւորելու համար։

Հարսները մեծ-նանի հսկողութեան տակ, տները մաքրում էին ձմեռուայ կեղտ ու մուրից և աշխատում էին նանի պատւէրի համաձայն կատարել ամեն ինչ։ Աղջիկները խումբ-խումբ թև-թևի տւած, իրար առաջ կտրելով շտապում էին ղէպի աղբիւրը. նրանք մաքրւելու ջուր էին կրում։ Ծերերը ծալապատիկ սրահներում նստած՝ թոռնիկների տրեխներն էին գործում ու կանաչ-կարմիր կապեր անցկացնում։ Նրանք, որոնց կարը թերի էր մնացել՝ ջանում էին աւարտել, որ նոր հագուստով դիմաւորեն եկող տօնին։ Կալերում, ծուռ ու մուռ փողոցներում,

հրապարակներում, մի խառնուած երեխաների սրտագին ճիչն ու աղաղակները, ճռաններից միապաղաղ հնչող ձայնը գիւղի կենդանութեան պակասը լրացնում էր։ Նրանցից երջանիկը նա էր, ով տօնին յարմար զգեստ ունէր և իր ճռանը զիլ ձայնով յաղթում էր միւսների ճռանին։ Իսկ նրանք, որոնք ճռանի չրջանը անց էին կացրել, առանձին խաղեր էին սարքել։ Նրանցից ամեն մէկը ջանում էր, այդ օրը խաղի մէջ յաղթանակել, որ Ծաղկազարդը նրան անշնորք չըգտնի ու յաղթած։

Գիւղի այս արտասովոր կենդանութիւնը ու զրաւիչ տեսարանները չէին հետաքրքրում Ծովինանի թոռ Գէորգին։ Նրա դէմքը մոայլ էր։ Մի ներքին խոր ու տանջող մտածմունք նրան կաշկանդել էր։ Խե՜ղճ։ Նա կանգնել էր բակում ու իր վշտալից հայեացքը չէր հեռացնում քաղաք տանող ճանապարհից։ Գէորգը մի թանկագին հիւրի էր սպասում, իր աննման հայրիկին։ Նա երկու տարի առաջ, մնաս բարև ասեց տանը, ճանապարհ ընկաւ դէպի քաղաք՝ աշխատանքի։ Բայց նա յետ չեկաւ։ Նրանից մի քանի րուբլի փող ստացուեց, այնուհետև կտրուեց թէ նամակը և թէ փողը։ Ի՞նչ պատահեց Գէորգի սրտի հատոր հայրիկին, ո՞ր չար ձեռքը յափշտակեց նրան, այդ նա անկարող եղաւ հասկանալ։ Ծովի-

նանը շարունակ խոյս էր տալիս Գէորգի հետ խօսք բաց անել այդ մասին։ Նա իր մեծ վիշտը թաղցնելով սրտի խորքում, աշխատում էր իր

Կաճառց ճաշակերույթը Ղարաբաղում

տան միակ ճրագ, մօրից որը մնացած Գէորգին ուրախ պահել, նրա 12 տարեկան կեանքը տան հոգսերով չը ծանրաբեռնել։

Գէորգը անզգայ չէր։ Նա իր մանկական սրտի սպանիչ վշտերի ու մտածմունքների քարացումն որոնում էր դէպի քաղաք ձգւած դաշտերում, սարերում ու ձորերում, որոնց միջով պիտի գար իր մխիթարիչ հայրիկը։ Խե՜ղճ. նա այդ դիշեր երազումն տեսել է նրան։ Գէորգը լաւ էր յիշում երազը։ Հայրը բերել էր քաղաքից նրա համար գոյնզգոյն թելերով չուխայ, արխալուղ, փափախ, գօտի և մի բա՜րձր, շատ բարձր ձայնով ճռան, որի բարակ լեզւակը, ատամնաւոր թուփը, ներկած կօթը, մարդու ուշք ու միտք էին տանում։ Երբ զարթեց, մի կրծող տխրութիւն պատեց Նրան։ Չկար հայրը և ոչ էլ նրա բերած թանկագին ընծաները։ Երազը խաբել էր նրան։ Ահա ինչո՞ւ, Գէորգը մոռացած Ծովի-նանին, ընկերներին՝ հայեացքը չէր հեռացնում դէպի քաղաք տանող ճանապարհի երկարութեամբ ձգւած սարերից, ձորերից և թաւշեայ դաշտերից։ Նա նստեց իր սովորական տեղը կոլոր քարի վրայ, գլուխն առնելով ձեռքերի մէջ։

—Գէ՛որգ, հէ՛, Գէորգ։

Դիմաց կալից կանչեց Գէորգի ընկեր Խաչօն և խաղը շարունակեց։

Գէորգ յետ նայեց շեշտակի։ Ծովի-նանը սրահում ճախարակը մանում էր ու քթի տակ իր սովորական սպանիչ ձայնով մի ինչոր բան

մրմնջում։ Երկու տարի էր, նրա համար Ծաղկազարդ չըկար և էլ ոչ մի ազիզ օր։ Եւ ահա համար պատրաստութիւն տեսնէր։ Մեղմ հովը թևատրած անցնում էր ու ճախարակի առաջ խնամքով զարձած բրդէ մալանշների հետ խաղեր սարքում։ Կարծես նա ջանում է Ծովի-նանի վշտերը, կրծող մտածմունքները ցրել, բայց անզօր գտնելով, իր վրէժը մալանշներից էր առնում։

Խաչօն մի քանի անգամ էլ կանչեց Գէորգին. նրանից պատասխան չըստանալով լուեց և մոռացութեան տուեց նրան։

Գէորգը անշարժ էր ու մռայլոտ։ Կարծես մէկը նրան կապել էր գետնի հետ։ Նա որոշել էր այդ օրը չըմիանալ ընկերների հետ. և ինչպէս միանար. չուխէն կարկատաններով նախշած, արխալուղը ձևիկ-ձևիկ, վափախն ու տրեխներն էլ ծակոտիկներով ծրծրած և զուրկ Ծաղկազարդի ճանապարհը բանող ճառնից։ Նա զգում էր, որ իր ցնցոտիները երբէք սազական չեն տօնին և համեմատել չէ կարող իր ընկերների գոյնզգոյն հագուստներին, որոնք դաշտում փուած բազմերանգ ծաղիկների էին նմանում։ Գէորգը կանգնեց։ Նրա թախծալից հայեացքը կրկին ուղղուեց դէպի քաղաք տանող ճանապարհը։ Արևը անցել էր սարերի յետևը։ Դաշտաւոյները կա-

մաց-կամաց դիմում էին տուն: Այդ նշան էր, որ երեկոն հեռու չէ: Յետ նայեց, Ծովի-նանը ճախարակը վերցրել էր, մալանչների մնացորդն էր ժողովում: Ուշքը դարձրեց դէպի կալերը. ընկերները թողել էին խաղը, Խեչօի գիլ ձայնը այլևս չէր լսում, նա խռովել էր Գէորգից: Ըրջապատը աւելի մռայլւեց. յուսահատութիւնը բոլորովին գերեց Գէորգին:

Այսօր էլ անցաւ, չէ՞որ դու ասացիր Ծաղկադարդի շաբթին կըգամ:

Գէորգը խօսքերը ուղղեց հօրը ու մտաւ տուն: Արևի վերջի ճառագայթները բարի գիշերի բարևներ էին տալիս բարձր սարերին ու լեռներին: Հով, պաղ զեփիւռը անցնում էր և յայտարարում ամենքին մէժան գալուստը: Գիւղը քնեց: Առաւօտը հարկաւոր էր շուտ զարթնել Ծաղկազարդին դիմաւորելու համար: Միայն Ծովի-նանն էր արթուն: Նա զալարւելով իր աղքատիկ անկողնում, տանջւում էր անձնատուր եղած իր սպանիչ մտքերին: Գէորգի հայրը, քաղաք գնալուց ետ, մի շաբթի վրայ բանտարկւեց: Նա գուր, ուրիշի գործած գողութեան համար պատիժ էր կրում: Այդ գիտէր Ծովի-նանը, բայց ծածկում էր Գէորգից: Իսկ նա ճըը է ազատւելու բանտից, այդ ոչոք չըգիտէր:

*
* *

Վաղ առաւօտ էր։ Դեռ լուսինը մեղմիկ սահում էր, իր կաթնանման լոյսը համատարած սփռելով գիւղի սրտին։ Պաղ, զով զեփիւռը միացած եկեղեցու միապաղաղ հնչուող զանգերի թռթռուն ձայնի հետ, թռիչք էր գործում, անից տուն, բա-

Կարմիր Զատիկի համար կաթնահունց

կից բակ, պատուհանները ու դռները ծեծելով ամենին ժամ էր հրաւիրում դիմաւորելու գարնան երկրորդ և մեծ տօնին—Կարմիր Զատկին։ Գիւղը կարծես գաղթում էր։ Մեծ ու փոքր, հարս ու աղ-

Չիկ, ծեր ու երիտասարդ ծուռ-մուռ փողոցներից խումբ-խումբ իրար հրելով, շտապում էին եկեղեցի՝ ժամ առաջ տեղ բռնելու։

Ծովի-Նանն էլ Գէորգի հետ անից դուրս եկաւ, մխալար քայլերը ուղղեց դէպի եկեղեցին։ Նա որոշեց այս տարի դիմաւորել Զատկին, հաշտւել նրա հետ, որ իր բանտարկւած Սաքօյին մի դուռը բաց անի, մի ողորմութեան ճար հասնի։ Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ։ Հնչւում էին զանգերը, ուրախ-ուրախ թըռ-թըռալով ու գիւղի գլխին պտոյտներ գործում։ Ծովի-Նանը զանգերի հնչման տակ երեսին խաչ էր հանում ու վշտալից հայեացքը երկինք ուղղում։ Մերթ ընդ մերթ լսւում էր գառների մայուններ գիւղի ամեն մի անկիւնից, ու Գէորգի ուշքն ու միտքը տանում Կարմիր Զատկի մատաղացուները, որ օր առաջ բերել էին գիւղը։ Մէ մա՜ա, մէ մա՜ա։ Յանկարծ լսւեց շատ մօտիկ։ Գէորգը կանգ առաւ ու մի ապանիչ ակ արձակեց։ Ա՜ճզճ. Նա յիշեց իր թուխիկ գարուն։ Հայրը գնեց աւագ շաբթին։ Մայրը դեռ կենդանի էր, իսկ հայրը իրան ժօտ, տունը լի ամեն բանով։ Նա սրտի մորմոքումներով յիշեց երազը—չուխան, արխալուղը, գօտին, ոտնամանները, իսկ ճռանը... Նրա ուշքն ու միտքը տարաւ։

Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ. նորից թռթռացին եկեղեցու զանգերը։ Գէորգը սթափւեց։ Նա մի քանի թըռիչքով հասաւ Ծովի-Նանին և դիմեց նրան.

Անան, ապէրը չՓկաւ. մեզ այս տարի էլ խաբեց։

Կը գայ, բալաս, կը գայ, յոյսդ մի կտրիլ, Կարմիր Զատիկը մեզ համար մի դուռը բաց կանի,—մոր-

Երկու քոյր Զատիկ

մոքեց Ծովի-նանը ու հայեացքը ուղղելով երկինք՝ մի քանի անգամ խաչ հանեց։

Կըգայ, կըգայ, ասում ես շարունակ, համա մեզ մոռացել է,—ասաց Գէորգը մորմոքիչ, բայց խռոված ձայնով։

Ծովի-նանը լուռ էր։ Նա անկարող եղաւ պատասխանել Գէորգին։ Գէորգի ամեն մի հարցը խոցոտում էր նրա սիրտը։

«Եկէք ժամ, եկէք ժամ», կրկին լսեց եկեղեցու զանգերի ձայնը ու թռթռալով անցաւ՝ սարերին, ձորերին, դաշտերին ու անտառին ևս աւետելու Զատկի մուտքը։

Գիւղը տեղաւորուեց եկեղեցում. Ծովի-նանն էլ Գէորգի հետ մի անկիւնում տեղ բռնեց։ Հազարաւոր վառուող մոմերը դրաւչական տեսք էին տալիս եկեղեցու կամարներին։ Ժամուրներից շատերը մեղմ ձայնակցում էին տիրացուներին, որոնք խմբւելով, մի ուրախ պատկեր էին թողնում։ Ծովի-նանը իր հայեացքը չէր հեռացնում այրուող մոմերից, որոնք աստիճանաբար փոքրանում էին և հալւածքներ թողնում դէպի գետինը։ Նրան թւում էր թէ, մոմերն էլ են արտասուում։

Զը՛նգ, զը՛նգ, գը՛նգ. աւելի ուժգին, աւելի թափով հնչեցին զանգերը, խլելով տիրացուների ձայնը։ Գէորգին թւաց, որ Զատիկը մտաւ եկեղեցի։ Նա մօտեցաւ Ծովի-նանին, ցանկացաւ իր ենթադրութիւնը ստուգելու. նրա ցանկութիւնը խլեց իրանց հարևան Մանին։

Աչքդ լոյս, Ծովի-նանի, տղեդ եկաւ, շուտ հասիր տուն,—ասաց Մանին ու մի տեղ բռնեց։

Գէորգը ժամուրների շարքերը ճեղքելով անյայտացաւ։ Ծովի-նանը մնաց փոքր շւարած, ապա սթափւելով, ուժերը մի տեղ ժողովեց, դիմեց դէպի տուն. նա գնում չէր, այլ թռչում։ Ժամուրների միջով կայծակի արագութեամբ անցաւ, Ծովի նանի տղէն ազատւել է բերդից ու եկել։ Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ, շընջացին բոլորը ու լռեցին։

---

Ժամերգութիւնը աւարտւեց։ Ժամուրները նոյն

Չաեկական սեղանի համար.

կարգով ցրւեցին գիւղի զանազան կողմերում։ Արևը լուսնին հալածելով բռնեց նրա տեղը։ Ծիծաղ, երգ, ուրախութիւն տէր դարձաւ գիւղին։ Գէորգի ուրախութեան չափ չկար։ Նա շրջապատւած ընկերներով

ցոյց էր տալիս հայրիկի բերած շորերը ու խաղալիքները։

—Էդ ո՞վ բերաւ, Գէորգ, քեզ համար, հարց էին տալիս ընկերները ու լարւած հայեացքով դիտում բոլորը, ինչ որ ունէր Գէորգը։

—Զատիկը բերաւ, Զատիկը—պատասխանում է Գէորգը հպարտ ու խրոխտ։

—Իսկ հայրիկին ո՞վ բերաւ,—հարց տւեց մի ուրիշը,

—Էլի Զատիկը բերաւ, ո՞վ պէտք է բերի—պատասխանեց Գէորգը, և յանկարծ տուն դառնալ. յանկարծ լսեց Յեչօյի ձայնը, երկու կարմիր ձու բռնած։ Նա հաշտւել էր Գէորգի հետ։

—Եկէք, ձւի խաղանք, եկէք։

Երեխաները Յեչօյի շուրջը բոլորեցին. սկսւեց ձուի խաղը։ Ծիծաղ, ուրախ աղաղակներ տէր դարձան շրջապատին։

Զատիկը բոլորին ուրախութեան բաժին հանեց, բայց ամենից շատ՝ Գէորգին.

Գ. Ք. Գ.

# ՍՊԻՏԱԿ ՁՈՒ

Զատիկ կիրակի օրը ընկերոջս այցելեցի։ Նրա բնակարանը գտնւում էր մի խալխուլ, մութ փողոցի վրայ։ Ներս մտայ—նա սենեակում չէր. բայց որոշեցի մի երկու րոպէ սպասել։ Սեղանի վրայ գրքերը թերթելուց յետոյ, պատուհանի առջև նայում էի դիմացի աղքատ բակը։

Սրա մի անկիւնում կանգնած էր մի խարխուլ խրճիթ՝ տանիքը ծածկւած ամուր հողով։ Տնակը փողոցից պաշտպանւած էր մի սպիտակ ու հին դարբասով։ Տան հիւսիսային պատի տակ նստած էր հին լաթի վրայ մի կին, փոքրիկ երեխան գրկած։ Նրանք տաքանում էին արևի ճառագայթներով։ Կնոջ գլուխը քաշ էր ընկած կրծքի վրայ։ Թէ իր և թէ փոքրիկի շորերը մաշւած էին։ Սրանց մօտեցաւ արտասուռ ութ տարեկան մի երեխայ, յուսահատ ձևերով, ձեռին մի սպիտակ ձու։ Նա ուզում էր խօսել, բայց չէր համարձակւում մօր վիշտը փարատելու։ Յանկարծ չոքեց մօր առաջ և գլուխը խոնարհելով գետին, սկսեց աղիողորմ լացը։

Մայրիկ... ինչու իմ ձուն սպիտակ է, ցոյց տալով ձեռքի ձուն։ Ինչու՞ դու էլ չես կարմիր ներկել... Տես, Յառատենց տղի ձուն ինչ կարմիր է... Արշարունու հայրը դեռ այսօր այնքան բաներ բերեց.—նա այնքան ուրախ է, որ... Ինչու, ասւր է մեր հայրիկը, ինչու մեզ համար բաներ չի բերում, գառ չի առնում... տես, ինչպէս ակկում է Համոյեանց սպիտակ գառը... նրանց փոքր տղան այսօր ինձ այնքան նախատեց...

Դու գառ չունես. դու կարմիր ձու չունես... դու որբ ես, եթիմ ես... ասում էր նա։ Ա՜խ, մայրիկ, և սկսեց հեկեկալ դառնագին, աւելի սեղմւելով մօր գրկին...

Մայրը լսում էր այս ամենը և սրտի խորքերից խոր հառաչ քաշում։ Ապա սրբելով աչքերը, տարաւ ձեռքը և երեխայի դանդուրները շոյելով՝ ասաց ցաւագին.

Ա՜խ, Սուրէն, քեզ չեմ խրատել, որ ուրիշի խօսքին չը լսես. ինչ ուզում են թող ասեն... իսկ պապայի մասին կրկին դու ինձ դիմում ես... չէ՞որ նա ուրիշ երկիր է գնացել... գառ բերելու...

Երկու խոշոր կաթիլները թրջեցին երեխայի դանդուր մազերը։

Վէր, գնա Ծաղիկ-բաջուից տուն, ասա, թող քո ձուն իրենց կարմիր ձւի հետ փոխի։

Փոքրիկ Սուրէնն առանց խօսելու հնազանդւեց մօր կամքին։

***

Ծաղիկ-բաջու թոռները, նկատելով Սուրէնին շատ ուրախացան։ Վազեցին նրան դիմաւորելու։ Որոշել էին նրանք, որ այդ Զատիկ օրւանից միշտ իրանց նման երեխաներին, թէև ցնցոտիների մէջ, ընկերանան, մտերմանան և բաժանեն իրանց խաղալիքը։

*Յարութիւն Վերդեան*

# ՍՈՎԱՄԱՀ ՄԱՐԱԼԸ

Գարնան արևը նոր էր ոսկեփայլ ճառագայթները փունջ-փունջ բարձր սարերի ու ծառերի կատարներին սփռել, որ Գէոն տնից շտապով դուրս եկաւ, շեշտակի անցաւ դէպի գոմը։ Գոմի դուռը ձայն տալով բացւեց և չանցած մի քանի րոպէ՝ Գէոն Մարալ կովի հետ կանգնած էր բակում։ Նա հետաքրքիր աչքերով մի քանի անգամ դիտելով Մարալին, սկսեց շփել նրա աչքերն ու ճակատը, պարանոցն ու մէջքը։ Ապա փափուկ ձեռքերը պատ բերելով Մարալի դեռնին թեքւած պարանոցին, գլուխը թափով ձգեց նրա գլխին։ Գէոն գիշերւայ կարօտն էր առնում Մարալից.....

Դաժան ձմեռը՝ կերի պակասութեան պատճառով խըլել էր խեղճ Գէոյից իր հօրից միակ հարստութիւն կազմող կովերը, եզները, ոչխարները, թողնելով միայն Մարալ կովին։ Գէոն որքան չանում, աշխատանք էր թափում Մարալին, իր միակ սրտի կտորին ուրախ պահել, կեանք ու հոգի տալ, ընդհակառակը Մարալը օր-օրի վրայ մաշւում էր ու կարծես ձիւնի պէս հալւում։ Անգութ ձմեռը իր աւերմունքից նրան ևս բաժին էր հանել։ Այդ օրը Մարալը իրան լաւ չէր զգում. այդ աւելի սպանիչ էր.....

Գէոն կողքից քաշ ընկած տոպրակից մի կտոր հաց մօտեցրեց Մարալի թուլացած շրթունքներին։

—Կեր, Մարալ ջան, կեր, որ ջանի կեաս, առողջա-

նաս,—ասաց Գէոն հայեացքը ուղղելով Մարալի գունատուած աչքերին, որոնք կարծես շնորհակալութիւն էին յայտնում իր փոքրիկ խնամակալին։

Մարալը անկարող լինելով հացի կտորը շրթունքներով բռնել, ձգեց գետնին։ Գէոն որքան աշխատեց հացը Մարալին ուտեցնել, նրա ջանքերը ապարդիւն անցան։

—Մոտ ես ուզում, Մարալ ջան։ Գնանք, գնանք հանդը, այնտեղ թաժա շատ, շատ խոտ կուտացնեմ քեզ, ասաց Գէոն մորմոքիչ ձայնով ու ցանկացաւ Մարալի աչքերը, ճակատը, մէջքը նորից շփել. նրա ցանկութիւնը խլեց գիւղի դիմացից մի մանկական զիլ ձայն ու ոլորումներով կորաւ ծուռ ու մուռ փողոցներում։

—Գէո՛, հէ, Գէո՛, Գէո՛...

—Հէյ, հէյ, ի՞նչ է, ի՞նչ ես ասում։

—Իսօր տաւարը ո՛ր կողմն ենք տանում։

—Ո՛ր կողմը՞...

—Հա, է, հա՜.....

Փխակի աղբիւրը՞ ՝, Փխակի աղբի՛ւրը. պատասխանեց Գէոն, գետնից յափշտակեց մահակը և Մարալի ու դաշտի ընկեր Սաքուլ շան հետ ճանապարհ ընկաւ դէպի գիւղի դիմացը, ուր ընկեր տաւարածները նրան էին սպասում։ Մարալը քայլում էր շատ դանդաղ ու միալար։ Նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում։ Կարծես մէկը, գետնից բըռնում, մեխում էր նրան։ Գէոն երբէք չէր նեղանում Մարալի դանդաղութեան վրայ։ Նա ամեն ինչ կըտար, եթէ միայն իր աչքի լոյս Մարալը հանգիստ ճնար, առողջանար, որը իր և մօր միակ տպրուստի աղբիւրն էր ճնացել։ Ահա ինչո՛ւ Գէոն ամեն ջանք չէր խնայում Մարալին առողջացած տեսնել։

Քիչ յետոյ տաւարածները, իրանց յանձնուած կովերի հետ դիմեցին դէպի Փխակի աղբիւրը, որ գիւղից այնքան էլ հեռու չէր։

Այդ օրը սքանչելի էր։ Երկինքը պարզ, տեսարանները գրաւիչ ու գեղատեսիլ էին։ Բայց այդ յափշտակող

տեսարաններից բաժին չունէր Գէոն։ Ընկերների կովերը այս ու այն կողմն էին ընկնում, գարնան նուիրած խոտից բաժին տանում, իսկ Մարալը հազիւ հազ քաշ էր տալիս իր ոսկրացած մարմինը և մերթ ընդ մերթ միապաղաղ սպանիչ տնքոցներ շրջապատին ուղարկում, որոնց յետեւում էր Գէոյի «Ջան Մարալ, Ջան» քարացնող բացականչութիւնները։ Կարծես դաշտը իր գեղեցիկ ու դրաւիչ տեսարաններով աւելի էր տխրեցրել Մարալին։

Տխուր էր և Սաքուլը։ Նա պոչը մէջքին օղակ արած, գլուխը գետնին խոնարհած, սգաւորի պէս հետևում էր Գէոյին։ Այդ նկատեց Գէոն, սրտի խորքից մի սպանիչ ախ արձակեց։ Նրան թւում էր, որ Սաքուլը լուռ ու մունջ Մարալի մահն է արտասւում։ Շրջապատը գիշերային տեսք ստացաւ։

—Ինչո՞ւ ես տխուր, Սաքուլ ջան. նեղացար որ առաւօտը հացը առաջ Մարալին տւի յետոյ քեզ, ասաց Գէոն, ու ձեռքում Մարալի համար պահած հացի կտորը Սաքուլին ձգեց։ Ապա այս ու այն կողմն ընկնելով մի փունջ խոտ հիւսեց, ուշքը դարձնելով դէպի Մարալը։

— Կեր, Մարալ ջան, կեր, տանը ինձնից խոտ էիր պահանջում,—ասաց Գէոն խոտի փունջը մեկնելով Մարալի շրթունքներին։

Մարալը կանգ առաւ։ Նրա ներքին շրթունքը կախւել է, առաձգները իրար հետ հիւսւել ու սեղմւել։ Այդ նկատեց Գէոն ու քար կտրեց։ Մեղմ. նա յիշեց Սօնա, Նարինջ, Ծաղիկ ու Նարգիզ կովերին։ Նրանք մահւանից մի քանի ժամ առաջ նոյն դրութեան էին հասել։ Քարացնող մի երկիւղ պատեց նրան։ Գէոն ոյժի բոլոր թափով խոտի փունջը գետնին ձգեց, թոյլ տալով Մարալին առաջ գնալ։ Ընկերները բաւական գնացել էին. հարկաւոր էր նրանց հասնել։

---

Տաւարածները հասան Փխակի աղբիւրին։ Նրա շուրջը գարունը իր առատ բարիքներն էր սփռել։ Գոյնզգոյն խո-

Խաչակաց գիւղում

տերն ու ծաղիկները, սառնորակ աղբիւրների ու վտակների քչքչոցը, դիւրեկան սաւառնող զեփիւռի սլսլոցը, խառնուելով թռչունների քաղցրահնչիւն ծլւլոցի հետ, ստեղծել էին մի գրաւիչ տեսարան, մի համերգային ներդաշնակութիւն։ Ոչվերը մշմշալով քաղել սկսեցին մեղրահամ խոտը։ Այդ տաւարածների միակ ցանկութիւնն էր։ Գէոն էլ հասաւ ու Մարալին բաց թողեց թաւիշանման խոտերում։ Մարալը ճաց տեղը մեխաւած։ Գէոն ամեն չանք գործ դրեց՝ նրան էլ խոտից բաժին հանել, ուրախացնել, նրա աշխատանքը ապարդիւն անցան։ Գէոյին թւաց, որ Մարալը երդւել է այդ օրը ոչինչ չուտել։ Նա կարծելով, որ Մարալը չուր է ուզում, մի քանի թռիչքով հասաւ աղբիւրին և նոյն արագութեամբ փափախը չրով լի մօտեցրեց նրա շրթունքներին։ Բայց այդ էլ չէր Մարալի ցանկացածը։ Նա խռոված երեխայի պէս գլուխը թեքեց դէպի աջ։

—Բա, ինչ ես ուզում, Մարալ ջան, ասա, էլի, ասա, որ գտնեմ ու բերեմ,—ասաց Գէոն սրտամորմոք ձայնով, փափախը թափ տւեց ու դլխին դրեց։ Ապա մի քանի քայլ հեռանալով, նստեց մի փայտի վրայ ու լալկան հայեացքը ուղղեց դէպի հեռուն... Խեղճ։ Նա սրտի մորմոքումներով յիշեց հօրը, նրա մահուանից յետոյ կրած տանջալից օրերը, անցած ձմեռւայ կրած նեղութիւնները, Մարալի վրայ դրած աշխատանքը և նրա գոյութեան հետ կապւած իր և մօր բախտը.....

*
* *

Արևը կամաց-կամաց փեշերը հաւաքելով, մօտենում էր արևմուտքին։ Դաշտաւորները օրինակ վերցնելով արևից շտապում էին ժամ առաջ տուն հասնելու։ Տաւարածներն էլ, կովերը մի տեղ ժողովելով, բռնեցին գիւղի ճանապարհը։ Նրանք մի քանի քայլ հազիւ էին անցել, որ տխուր ու սպանիչ ոլորումներով մի մանկական ճիչ լսեցին։ Գէոն էր ճչողը։ Մարալը փուել ու գլուխը թակում էր գետնին։ Տաւարածները մի ակնթարթում շրջապատեցին Գէոյին։

Նրանց ջանքերը Մարալին ոտքի կանգնեցնել՝ ապարդիւն անցան։ Մարալը մի քանի անգամ էլ գլուխը գետնին թաւկեց ու անշնչացաւ։

Գէոյի այտերը կարմիր խնձորի գոյն էին ստացել։ Ճակատից հոսող քրտինքը խառնւելով արտասուքի խոշոր կաթիլների հետ թափւում էր բաց կրծքին։ Նա երկար դիտելուց յետ Մարալի անշնչացած դիակին, խելագարի շարժուձեւերով հասաւ Սաքուլին, ձեռները պատ բերեց պարանոցին, և խեղդւած ձայնով պատւիրեց հանել տուն և յայտնել մօրը դժբախտութեան եղելութիւնը։ Ապա շեշտակի հանելով Մարալին, մի ոտի վրայ խոնարհւեց, բռնեց եղջիւրներից, ցնցեց.

—Վեր կաց, Մարալ, վեր կաց. բա որ նանը ասի ուր է Մարալը, ինչ ասեմ նրան։

Լուռ էր Մարալը, ոտքերը ձգւած, լեզուն կիսով չափ հանւած, աչքերը լայնացած ու յառած դէպի Գէոն, որոնք կարծես վերջի շնորհակալութիւնն էին նրանից՝ նրա ծառայութեան համար։ Գէոն կանգնեց ու բոլոր թափով դետնին ձգեց մահակը։

—Գնա, էլ պէտքը չես. կացիր Մարալին պահիր,—ասաց Գէոն, ու վազելու չափ քայլերը ուղղեց դէպի տուն, կարծես մէկը նրան քշում էր դաշտից։

---

Մութը իր սև թևերը պատեց երկրին։ Դաշտը լռեց. միայն գիշերային թռչուններուի ձայնն էր հովի հետ տարւում։ Կարծես բոլորը Մարալի մահն էին ողբում ու նրան հովանաւորում։

Դր. քահ. Դորգեանց



# ՔԱՐԱՅԱԾ ՀՕՏ

## I

Երկար տարիների ընթացքում, որոնք շարան-շարան եկել անցել գնացել են իրար յետևից, պահպանուել է առասպելական այս պատմուածքը մի աւանդական քարացած հօտի մասին։

Երեկոյ էր։ Մ. գիւղի եկեղեցոյ կոչնակ զանգակները սկսեցին ղօղանջել։ Արևը բեզրած իրա երկար ճանապարհորդութիւնից, կամաց-կամաց մօտենում էր մօր գրկին, որ սարերի յետևից պսպղում էր վարդագոյն լուսով։

Ծողովուրդը ջերմեռանդ սրտով վազում էր դէպի եկեղեցի՝ իրա հոգևոր պարտքը կատարելու։ Մայիս ամսի սկիզբն էր. բնութիւնը հրճւում... ծաղիկների զովաշունչ բուրմունքը տարածւել էր չորս դին. հեզիկ զեփիւռը շոյելով նրանց երփներանգ, զարդարուն գագաթները՝ կարծես օրօր էր ասում։

Տան-դր։ Տան-դր։—Նորից ղօղանջեցին եկեղեցոյ հրաւիրակ զանգակները։

—Դէ, սիրելի՛ զաւակներս, ասում էր Սարգիս Ափոն, հաւաքւեցէք բոլորդ էլ և գնացէք եկեղեցի. տեսնում էք, զանգակները կանչում են մեզ։

Եւ այսպէս՝ չորս կողմից լսւում էին այսպիսի խօսքեր. իսկ զանգակները՝ Տան-դր...ն շարունակւում էին։ Լցւեց եկեղեցին աղօթող մարդկանցով. հասակաւոր մարդիկ՝ ոմանք

չոքած եկեղեցու քարէ յատակի վրայ, ոմանք կանգնած, գլուխները քաշ դցած, ջերմեռանդ սրտով, ձեռները դէպի երկինք բարձրացրած՝ աղօթք էին շշնջում։ Իսկ եկեղեցու յետևի մասում կանայք էին կանգնել՝ բերանները կապած թաշկինակով՝ արտասուում էին։

Քահանայի և տիրացուի աննեղդաշնակ երգեցողութիւնն ու սաղմոսներն էին զբաղեցնում այս՝ գիւղական, նահապետական կեանքի անդամներին։ Ժամասացութիւնը վերջանալու մօտ էր, երբ քահանան իր անմշակ ձայնով սկսեց քաշքշել «Տէր ողորմեա»-ն, որին և միևնոյն ժամանակ, համարեա մտքի մէջ, ձայնակցում էր ամբողջ աղօթող հասարակութիւնը։

Ժամասացութիւնը վերջացաւ քահանայի «Օրհնեալք եղերուք» խօսքերով. աղօթողները մօտեցան նրան և համբուրելով նրա ձեռքում բռնած Աւետարանը և տէր հօր ձեռը, վերադարձան տուն։

Այս աղմկալից իրարանցմանն ու շփոթին միացաւ և տուն վերադարձող հօտի մայոցն ու բառանչոցները։ Հովիւների-«օ թիւռ...»ները չըկարողացան լռեցնել այս խառնիճաղանճ շփոթը։ Զանցան 5—10 րոպէ, արդէն ամեն անից լսում էր—թ՛շ—ֆ՛շ, թ՛շ—ֆ՛շ... Ամբողջ հօտը, իր կուրծքը լցած կաթով, լուռ ու մունջ հպատակւում էր իր ծծերի պտուկները քաշքռտող կնոջը։

Բայց, սիրելի ընթերցող, մենք ներս մտնելով այդ երջանիկ կեանք վայելող մարդկանց հետ եկեղեցի և ապա հետաքրքրւելով գալող հօտի մայոցներով ու նրանց կաթի թ՛շ-ֆ՛շ-ոցներով, չը նկատեցինք թէ ինչպէս արևը թաղնւեց սարերի յետևը, թողնելով մեզ իր լուսատու յետք ճառագայթները, որոնք ընկնելով մի քանի կտոր ամպիկների վրայ՝ մի զմայլեցուցիչ տեսարան էին ներկայացնում։ Այսպիսով մենք թէև ականատես չեղանք արևի մօր ընդունելութեանը, բայց տեսանք, թէ որպիսի յետք ունեցաւ այդ փաղաքշանքն ու սիրալիր ընդունելութիւնը։

II

Վաղուց արդէն դադարել էր գանգակի ղօղանջիւնը. չքացել էր իրիկնադիմի վերջալոյսը, չորս-դին պատել էր գիշերային մութը. երկինքը վկայում էր այդ իր անհամար աստղերով. իսկ արևելքից կամաց կամաց դէպի վեր էր բարձրանում գիշերապահ լուսինը՝ չորս կողմը սփռելով իր լուսատու ադօտ ճառագայթները։ Ամբողջ գիւղը գանւում էր խաղաղ դրութեան մէջ։ Այն հօտը, որ մի քանի ժամ առաջ ահագին աղմուկ ու իրարանցում առաջացրեց, այժմ կամաց կամաց բարձրանում էր մի բլրա-

կի վրայով, կարծես մխիթարւելով իր առաջնորդող հովիւի սրնգի շւվոցներով և լօլօներով։ Իսկ գիւղի նահապետական կարգ ու կանոնը իր բոլոր ճշտութիւններով իշխում էր այդ երջանիկ մարդկանց վրայ։ Նրանք իրանց առաքինութեան համեմատ, իրանց համեստ ընթրիքը վայելելով, իրարու «գիշեր-բարի» մաղթելով, ուղևորւեցին դէպի իրանց ննջարանները, «գիւղական ննջարանները»։

Առաւօտ էր։ Թռչուններն, իրանց քաղցրիկ մեղեդի-

ների ազդեցութեան տակ, հրապուրւում էին միմեանցով։ Մայիսեան անուշահոտ ծաղիկները, չորս-դին սփռած իրանց անմահական բուրմունքը, կարծես ուզում էին մխիթարել գիւղի շփոթած ժողովրդին։ Մի խօսքով բնութիւնը գանւում էր երջանիկ դրութեան մէջ։ Միայն Մ. գիւղն էր, որ շփոթած, չորս-դին էր վազվզում ու ամեն մի պատահողին հարցնում.— չիմացաք որտեղ է մեր նախիրը.— և առանց պատասխանին սպասելու վազում մի ուրիշ անցուորին,—չիմացաք որտեղ է նախիրը։ Ամբողջ գիւղը—կաթի ամանները ձեռներին, սպասում էին նախիրին, որ կթեն իրանց հաւատարիմ կթաններին. բայց նրա հետքն անգամ չէր երևում, մինչդեռ ամեն օր, այդ ժամին նախիրը կամաց-կամաց մօտենում էր՝ յիշեալ բլուրի վրայից։ Գիւղացոց համբերութիւնը հատաւ, այլ ևս նրանց վրայ չը մնաց այնքան ոյժ, որ էլի մի քիչ սպասէին։ Նրանցից մի քանիսը առարկում էին թէ, երևի թշնամիներն են յափշտակել, միքանիսը մի այլ բան էին ասում, այնպէս որ ոչինչ չէր կարելի եղրակացնել։

Հաւաքւեցին գիւղի չահէլներից մի խմբակ, գինւեցին մահակներով ու ժանգոտած գերանդիներով և ուղևորւեցին դէպի այն փարախը, որտեղ հովիւները հանգստացնում էին ամբողջ գիւղի հօտը։

Գիւղական ժողովուրդը, աչքերը ուղղած դէպի յիշեալ տեղը, անհամբեր սպասում էր խաբարի։ Համարեա մի ամբողջ ժամ ու կէս, խեղճերը գանւում էին այս տեսակ լարւած դրութեան մէջ։ Յանկարծ բլուրի ծայրից երևացին գնացողներից մի քանիսը, որոնք գլուխները քաշ գցած վազում էին բլուրն ի վայր, դէպի հաւաքւած ժողովուրդը, որը աղաղակներով դիմաւորեց նրանց՝—Աստուծոյ պատիժն է հասել մեզ,—խօսեց եկւորներից ամենահասակաւորը,—ահա մեր գիւղի ամբողջ նախիրը քարացել է, իսկ հովիւ Կարօն, իր հովւական մահակը ձեռին չոր քար է կտրել կանգնած տեղը։

Այս խօսքերը այնպիսի սարսափ գցեցին խռնւած ժո-

ղովրդի մէջ, որ մի րոպէ կարծես բոլորը պապանձւեցին և չէին ուզում հաւատալ իրանց ականջներին, բայց երբ երիտասարդը շարունակեց—«եարաբ ինչ բան է»,—բոլորը վայ ու վէյ, ախ ու վախ կանչելով վազեցին բլուրն ի վեր, դէպի «քարացած հօտը»։ Եւ ինչ. ով զարմանք,—ամբողջ հօտը անշունչ, քարացած արձան էր դարձել։ Անշնչացած քար-կենդանիները,—որը վիզը վեր ցցած, կարծես ուզում էր բառանչել, որը պոկած նորաբոյս կանաչը դեռ չէր քցել առաջները տակ, որ ծամէ, և այլն...

Իսկ ամենահետաքրքրականը հովիւ Կարօն էր, որ իր մի ձեռքում բռնած հովւական մահակը, միւս ձեռքում իր ընկեր սրինգը՝ իբրև մի կենդանի պատկեր,—անշարժ կանգնած էր իր հօտի առաջ։

Մի երկուսը մօտեցան նրան, ուզեցին առնել ձեռքից մահակն ու սրինգը, բայց աւդ, նրա քարացած ափերի մէջ այնպէս պինդ էին սեղմւած այդ երկու երջանիկ առարկաները, որ ոչ մի հնար չըկար բաժանելու։

Այո, երջանիկ էին, ասում եմ, այդ մահակն ու սրինգը, որովհետև այդ քաօսային տարածութեան մէջ, միայն նրանք էին ազատւել այդ կախարդական քարացումից։

Վ. Այ-Վազ.



# Ա Ի Ա Ր Ա Յ Ր

*(Պատմական քերթուած)*

*(Սկիզբը Աղբիւր № 2)*

XV

*—Է՛յ, դահիճներ», նա մռնչաց ինչպէս առիւծ լեռնային.*
*Դահիճները իսկոյն մտան, ողջոյն տուին արքային.*
*Շղթայեցէ՛ք շուտ բոլորին և մուէ՛ք բանտը ձգեցէ՛ք*
*Ու մինչև լոյս բանտի շուրջը զգուշութեամբ հսկեցէ՛ք.*
*Թէ որ վաղը, առաւօտեան, արեգակի ծագելուն,*
*Սոքա մերժեն ժամնակցել սուրբ արևի պաշտելուն,*
*Այն ժամանակ ձեր սրերը սոցա խելքի կըբերեն,*
*Իսկ վիթխարի մեր փղերը սրանց երկիրը կաւերեն։*

XVI

*Դէհ, սկսեցէք. այսուհետև թող բոլորը իմանան...*
*Յանկարծ դրսից աղմուկ լսեց. արքան մնաց բաց բերան.*
*Դուռը բացւեց և շտապով մի ծեր գուժկան ներս մտաւ.*
*«Յոյներն եկան, յոյներն եկան»... արքան բոլորն իմացաւ։*
*Էլ յոյս մնաց նրա սրտում. ո՛չ, ամեն ինչ կորած է.*
*Եւ իր բաղդը արդէն վաղուց նրա ձեռքից թոռած է.*
*Նա նստել է գահի վրայ՝ կայծակնահար ու վհատ.*
*Յազկերտն է դա, որ քիչ առաջ ինքն էր ծնում որոտ, շանթ...*

*
* *

*Բ.*

I

*Մուէ գիշերւայ սև խաւարում՝ ինչպէս ուրու չարագէմ*
*Բարձրանում է մի յաղթ ամրոց հէնց Տիսբոնի դէմ ու դէմ.*
*Նորա հպարտ սեգ գագաթը տարածուել է վեր ու վեր*
*Եւ իշխում է մթին ծովում, ինչպէս մի դև անվեհեր։*
*Ոչ մի ծպտուն չի բարձրանում նորա շուրջը ձորի մէջ.*
*Բայց երբեմն պահնորդների ձայնն է լսւում և սուր ճիչ։*

Նորա ներսը այդ հանգստին և՛ օտար է և՛ հեռի,
Այնտեղ են միշտ մահն ու սարսափ և վշտի ծով ահռելի։

II

Խոնաւ բանտում, գետնի վերայ շղթայակապ հայ քաջերը
Տարածուել են մխիթանց մօտիկ, բայց անխուփ են նրանց աչքերը.
Անդուլ մահուան ճնշող տագնապ և հայրենեաց վառ կարօտ,
Փախցըրել են քաղցր քունը նրանց աչքերից արտասուոտ։
Առաւօտեան դահճի սուրը պիտ մերկանայ նրանց գլխին,
Եւ պէտք է տան վերջին բարև հայրենիքին, աշխարհին։
Բայց որքացած Հայաստանին ինչ վախճան է սպասում.
Օ՜հ, այս մխքը թշուառներին կաշկանդել է, սպանում։

III

Եւ յիշեցին Հայաստանի հողն ու ջուրը կենսատու,
Հսկայ լեռները, դաշտն ու արօտ և պարտէզները պտղատու.
Այն վայրերը դրախտանմանի՝ ծածկուած դալար կանաչով,
Ուր հոսում են առուակները կախարդական կարկաչով.
Ուր վերամբարձ, սեգ ժայռերից այծիկ, եղնիկ անվեհեր
Յատկում են վար թաւալգլոր, կրկին թռչում դէպի վեր.
Բայց յետևից ազատանու սուր սլաքը թիւնալից
Վերջ է տալիս նոցա կեանքին և գլորում ժայռերից...

IV

Օ՜, յիշեցին անգին որդոց ու սև հագած մայրերին,
Եւ ալեզարդ ու դողդոջուն անօգնական հայրերին։
Եւ բոլորից պիտ բաժանուէն, ծո՜հ, ինչ հարուած սոսկալի՜,
Ի՞նչ կորուստ է ընտրել նոցա ճակատագիրն ահռելի։
Յանկարծ լսուեց դռան ճռինչ. մի՛թէ զարկեց ժահուան ժամ.
Դահի՜ճն է դա, ձուր է գալիս, մահ է բերում տարաժամ.
Բայց խեղճերը մեղքի համար չեն աղօթել Աստծուն.
Եւ անհաղորդ պէտք է մեռնեն մեղքերի մէջ թաթախուած։

((Կը շարունակուի) Ց. Պետրոսեան

# ՄԱՆԿԱԿԱՆ ՖԵԼԻԵՏՈՆ

## ԿԱՏԻՒ ՈՒ ՇԱՆ ԶԱՏԻԿԸ

1.

Քեռին նստած սեղանի
քով՝
Ճաշ էր ուտում ընտա-
նիքով։

2.

„Տեսէք, ո՛վ է. դանգ են
տալիս...
Ի՞նչ անյարմար վախտ
են գալիս...»

3.

«Դէ՛, շո՛ւտ, դէ՛, շո՛ւտ,
բե՛ր թաք կացնենք—
Երբ որ գնան, յետոյ կու-
տենք....»

4.

«Բարև, տիկին... ինչ էք,
լաւ էք...
Մ՛յ, համեցէք, խնդրեմ՝
նստէք...

5.

Ամենքն անհոգ գրոյց
են անում,
Ջունն ու կատուն քէֆ
են անում։

6.

Երբ հիւրերը թողին,
գնացին,
Քեռին ու կինն ապշած
մընացին—
Տեսան՝ հաւը մաքրա-
զարդուած,
Ոսկորները գետնին ցըր-
ւած...

*Ցարութիւն Թումանեան*

*1883* Երեւանաւեակ **Աղբիւրի** *1912*

Բացւած է 1912 թ. բաժանորդագրութիւնը

XXX ՏԱՐԻ

# ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXIII ՏԱՐԻ

*ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ*

*Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մանակցութեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արւեստագէտների։*

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ.

I. *ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» յաւելւածով։*

II. *ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յաւելւածով։*

III. *ԱՌՈՂՋԱՊԱՀ ամսաթերթը։*

IV. *ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ V և VI պրակներ.*

V. *ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՄԱՆԱԽ 1913 թ.*

VI. *ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ։*

VII. *ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմագոյն հրաշագեղ պատկեր, պատրաստւած Եւրոպայում։*

VIII. *Հայոց ապագայ վեհափառ կաթողիկոսի մեծադիր պատկերը։*

IX. MONA LISA (*Ջիոկոնդա*) *Լուվրի մուզէից գողացած տիեզերահռչակ հիասքանչ նկարի իսկական պատճէնը, հոյակապ զարդ ամենափարթամ դահլիճի։*

X. *Մեծն Նապոլէօն I և հայոց Լևոն վերջին թագաւոր։*

XI. *Նապոլէօն Բօնապարտի մանկութիւնը պատկերներով։*

XII. *ԵՐԵՍՆԱՄԵԱՑ ԱՂԲԻՒՐԸ*, souvenir.

**Այս բոլորի տարեկան բաժանորդագինը**

**10 ր., արտասահմ. 18 ր. կամ 50 ֆր.**

---

## *Դպրոցական աշակերտների համար*

Աղբիւրը *տարեկան* 2 ր. *Առանց յաւելւածների* 1 ր.

*ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ տարեկան* 3 ր.

*ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յաւելւածների, պրեմիաների և Թատրոն երաժշտութեան՝ տարեկան* 4 ր.

Աղբիւր, Առողջապահ, Տարազ, *բոլորը յաւելւածներով եւ պրեմիաներով* 5 ր. (*արտասահման* 10 ր.)

*Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունւում։*

*Հասցէն՝* Тифлис, Редакція „АГБЮР“ *կամ* „ТАРАЗ“.
Tiflis, (Caucase) Direction Agbür *կամ* Taraz.

*Խմբագիր-հրատարակիչ՝* ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

ՊԱՐԻԶՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՍՏ ՍՄՔՆԱ-

ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶՆԵՐԻ

LINGERIE FINE, TROUSSEAUX,
BLOUSES. JUPONS et ROBES BRODEES

*Le Trousseau Royal*

*116 Rue La Boëtie, 116.* PARIS (8-e)

(Champs-Elysées)

(25—11)

## Каждый благоразумный человѣкъ

долженъ асигновать для своего счастья ежегодно нѣсколько рублей для нравственнаго подъема духа, такъ какъ „Гдѣ есть надежда тамъ нѣтъ отчаянія“ и участвовать во всѣхъ тиражахъ выигрышей правительственной Лотери происходящей въ г. Варшавѣ при Государственномъ Банкѣ. Это самое выгодное участіе, ибо половина билетов выигрываетъ. При незначительной затратѣ Вы можетс выиграть очень крупную сумму.

ГЛАВНЫЯ ВЫИГРЫШЪ

**75,000** РУБЛЕЙ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | выигрышъ | руб. | 40,000 |
| 1 | „ | „ | 20,00 |
| 1 | „ | „ | 15,000 |
| 4 | выигр. по | 10000 „ | 40,000 |
| 3 | „ „ | 8000 „ | 24,000 |
| 2 | „ „ | 5000 „ | 10,000 |
| 10 | „ „ | 4000 „ | 40,000 |
| 1 | „ „ | 3000 „ | 3,000 |
| 27 | „ „ | 2000 „ | 54,000 |
| 45 | „ „ | 1000 „ | 45,000 |

и еще 10454 другихъ выигрышей

***Тиражи произойдутъ:***

29 и 30 Марта, 26 и 27 Апрѣля и 28 Мая с. с. въ теченіе 10 дней до 6 іюня включительно.

Цѣны участія во всѣхъ тиражахъ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Пай въ | 1/20 | часть | билета | 5 р. |
| „ „ | 1/10 | „ | „ | 10 „ |
| „ „ | 1/8 | „ | „ | 12 „ |
| | 1/4 | „ | „ | 24 „ |

Официальн. тиражн. таблицъ высылаются безплатно.
Уплата выигрышей производится немедленно.

Деньги можно присылатъ и почтовыми марками въ заказномъ письмѣ.

ПРОСИМЪ АДРЕСОВАТЬ:

Банкирскому дому **Л. Левита и Ко** Варшава Нововеликая № 11.

(2—1) Адресъ для телеграммъ: ЛЕВИТБАНКЪ, Варшава.